

Թէ սարսափելի վիշապի պատահած յանկարծ յեա-
դարձաւ, կատաղած՝ թաւալգլոր փրփրալով՝ հեղալով՝
ժամերով հեռացաւ՝ առանց յետին նայելու:

Բարեկամ, մեր նպատակն մեր ուղին շարունակելն
էր, հեռացանք մեր նպատակէն:

Արդ, մեր ուղղութիւնը պիտի շարունակենք 2 ժ.
շղթայիս ուղղութեամբ. երբեմն շղթայիս գագաթան
հիւսիսային կողէն առնկող պիտի հասնինք Աղբուլտի,
լեռան, Աշան օղլիէն անցանք, թողինք ի հիւսիս Մա-
տուռայ և Կապուտայ ջրերն, որ յԵրասխ կը հոսին,
յաջ Կալոյի կամ Գալոյի ջուրն, որ ի Շեռեան կը հո-
սի, հասանք գագաթան մի՝ Շեհիտներ անուանեալ վայ-
րըն, յորմէ տաս վայրկենի չափ զառիվայր մի խո-
նարհելով մի յստակ աղբեր, որ քրդեր կանխէ Զքան
կասեն, իսկ հայք չուխտակ աղբիւր և թուրքք Ղոշա-
բուղար, որոյ մօտ կանգ առինք: Մեր ուղին արդէն
արեւելեան հիւսիս կը տանի, մեր առջևը պարզուեցաւ
հարաւէ ի հիւսիս տանող մի այլ ուրիշ ճանապարհ,
դա Ամատ գիւղի ճանապարհն է, որ Կաղզուան գնալու
համար մեր ճանապարհին կը խառնուի, իսկ եթէ
անտառը գնալու է, ուղղակի կտրէ, կանցնի ի հիւսիս:
Ամատ գիւղը մեզնէ 3 ժամ հարաւ է,

Դեռ աղբեր մօտն ենք, ի հիւսիս ի խոնարհ մեր
տեսութեան առջևը կը պարզուի եղենեաց անտառ մի
(Չուխուր-Չամ), որոյ միջավայրը համանուն լճակ մի
մեզմէ 1 ժամ հեռի, յորմէ դուրս ջուր մի բղխելով
կը կազմէ Կապոյտ ջրի երկրորդ ծիւղն:

Այժմ մեր ուղին կը շարունակենք 10 վայրկեան
բարձրանալով և 1 ժամ կողէկող անցնելով կանգնեցանք
Աղ-Բուլտի գագաթան վերայ: Այս տեղ քեզ կը ներ-